

Ատանա եւ Բերիա նուիրահաւաքութեամբ շրջիւք, եւ
 Եպիսկոպոսանալու համար Կարնոյ վրայէն Եջմիածին
 ուղեւորիւք:

Սարգիս այս դպրանոցին մէջ ինք զինք
 ուսման տուաւ ամենայն եռանդեամբ, եւ երեք
 տարի եւ քիչ մ'աւելի հոն մնալով՝ դասակից-
 ները գերազանցեց, 23 տարեկան (1722) ձեռ-
 նագրեցաւ Կիսասարկաւագ եւ Աւագ Սարկաւագ,
 եւ երեք տարի ետքը (1726) քննութիւն տա-
 լով՝ քահանայ ձեռնադրեցաւ եւ նոյն օրն՝

Ընկալեալ վեղար՝ սրբոյն Անտոնի
 ըստ ծիսի ազգիս՝ կրօնաւորի,
 մըտեալ ընդ լծով՝ վանական կարգի:

Այնուհետեւ աւելի եռանդեամբ աստուա-
 ծաբանական ուսմանց հետեւեցաւ, Ս. Հարց
 գրութիւնները կարդաց եւ մասնաւորաբար քա-
 ռոզուութեան հետամուտ եղաւ: Տարի մ'ետքը՝
 1727ին Կոլոտ Պատրիարք զինք անձամբ բար-
 ձրացուց վարդապետութեան փոքր եւ ծայրա-
 գոյն աստիճաններու: Սարգիս Վ. քիչ ատենէն
 նշանաւոր քարոզչի հռչակ հանեց Կ. Պոլսոյ մէջ.
 Թէ՛ մեծամեծները եւ Թէ՛ հասարակ ժողովուրդը
 գունդագունդ իր քարոզները մտիկ ընե-
 լու կը փութային եւ զինք շատ կը մեծարէին.
 մինչեւ իսկ Կոլոտ Պատրիարք իր զբաղմանց
 պատճառաւ անձամբ քարոզելու միջոց չունե-
 նալուն՝ զՍարգիս Վ. իւր տեղը քարոզիչ
 կարգեց:

Նոյն միջոցին Կեսարիոյ Առաջնորդը մեռած
 ըլլալով՝ Կ. Պոլիս հաստատուած Կեսարացիք